

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Redaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԿԻՐԱԿԻ օր, ապրիլի 26-ին, Դժբոցօվայա փողոցի վրա, Գամոյեանց եկեղեցում
կը կատարվի հոգեհանգիստ

ԲԱՅՅԻԻ

մահվան չորրորդ տարվայ տարեգարծի առիթով: Սկիզբն է 1 ժամին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքահայ եղբայրներին. Ղրիմի Ս. Խաչ վանքը. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքահայից. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՏԵՂԵԿԱՑՈՑ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կենդանագիրներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԱՋԱՑ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Ասում են այսօր, որ զուր չատ բան էք. դուք անապին մեծամասնութիւն էք և նշանաւորագոյն եկեղեցականներով ծաղկած էք. ուրեմն և, ասում են, ձեր ձայնը պիտի որոյն, թէ ով է լինելու հայոց կաթողիկոսը և անպատճառ ձեր կողմի եկեղեցականներէն մէկը պէտք է գրաւէ Լուսաւորչի դահլը, որովհետեւ ձեր չափ փայլուն անունները դիմացը և ոչ մէկ հատիկ անուն կարող ենք դնել, մինչդեռ ուսանայիս *):

Ձեզ այսօր այդ են ասում և պատմական ողբ-երգութեան ճառ-առաջնորդներով ողջնում են ձեր գալուստը Այրարատեան դաւաճը. դուք այսօր գոյություն սիրով փայտալիւծ էք, Թիւրքահայ եղբայրներ **):

Սակայն այդպէս խօսող և հրաշունչ բերանով ձեզ համբարողներին նախահայերը այդպէս չէին խօսում ձեզ հետ, այդպիսի ողջոյն չէին տալիս ձեզ 1884 և 1885 թվականներին և առաջ: Այն ժամանակ դուք, «վայրալատին եղբայրներ», սպառնալիք էիք և խորհել էր ձեր կամքը հա-

*) «Արձագանք» № 16. փետր. 7. 1892 թ.

**) «Արձագանք» № 47, ապր. 22. 1892 թ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՆԴԱՆԱԳԻՐՆԵՐ

ԵՐԵՄԻԱ ԳԱՂԱՏԵԱՆ

Այն անձինք, որոնք այցելում էին Ս. Էջմիածինը թէ Գէորգ IV-ի և թէ Մակար I-ի կաթողիկոսութեան ժամանակ, անշուշտ յիշում կը լինեն բարի և արտաբայողի ղէմքով եպիսկոպոսին, որի վարմունքը այցելուի հետ՝ մարմնացած բաւական է, որի ամեն մի խօսքը, ամեն մի քայլը կրում է իր վրա կատարելապէս համեստութեան դրոշմը: Նրկու կաթողիկոսների ժամանակ Նրեմիա եպիսկոպոսը առաջ-առաջարկ է եղել, երկու կաթողիկոսներին նոյն իսկ կենդանութեան ժամանակ Նրեմիա եպիսկոպոսը կատարում էր, եթէ այսպէս կարելի է ասել, կաթողիկոսական փոխանորդի պաշտօնը... Ամենքի հետ բարի, վերին աստիճանի հիւրասեր, միշտ համեստ, այդ մարդը կաթողիկոսից յետոյ իր զիջքով առաջին մարդ լինելով, գրեթէ ոչինչ ներդրածութիւն չունէր Էջմիածին վրա, ոչինչ ազդեցութիւն չունէր գործերի վրա: Ուզում էիք մի բան խնդրել, մի գործ ածողները... պէտք է դիմէիք ոչ թէ առաջ-առաջարկին, կաթողիկոսի փոխանորդին, այլ Մանկունան, ապա Սուրբաթին և այլն:

Իր պաշտօնը ձեռք կատարող, իր պարտաւորութիւններին վերին աստիճանի բարեխղճութեամբ վերաբերվող Նրեմիան՝ երբեք չէր ձգտում երկու

յոց հայրապետական աթոռին զանալա ընտրելու գործին մէջ:

Այն ժամանակ «Մեղու Հայաստանի» լրագիրը Թիֆլիսում, քարտիկով թէ կաթողիկոսութիւնը զլիաւորապէս ուսանայող համար է և ինքնին լով հայրապետութիւնը մինչև անգամ պարզ վանահայրութեան աստիճանին, իսկ և միւս կողմից առաջ մղելով այն՝ որ կաթողիկոսացուն պէտք է տեղեակ լինի երկրի կարգերին, օրէնքներին, սովորութիւններին, ձգտումներին, դադարներին և մինչև իսկ ժողովրդի շնչաւոր անդամներին, բոլոր ձեռք թափում էր, որ կաթողիկոսանայ ոչ նա, որին տաճկահայ «վայրալատին եղբայր» էր ցանկանում, ոչ նա, որին ընդհանուր հայութիւնն էր ուղում, այլ նա միայն, որին միայն մեղուական կուսակցութիւնն էր փափագում: Այն ժամանակ տաճկահայ եկեղեցականի աշխուստնումը, նշանաւորութիւնը, փայլը որ և է հրապուր չունէին, ինչ եմ ասում, գոյութիւն իսկ չունէին: Բայց այսօր «կոչնկի», «Մեղու», «Արձագանք» և իր Ազնիւ-ընկերի միացեալ ուժերը, «Արձագանք» Մեղու-արձագանքեան դրօշակի տակ ամբողջաբար, ուղում են, որ հայրապետական զանի վրա բազմի միայն տաճկահայ եպիսկոպոսը, որովհետեւ նա է միայն ինչ որ կայ, և նրա փայլի առաջ խաւար բծեր են ուսանայ եպիսկոպոսները:

Այն ժամանակ այսօրվայ միացեալ ուժերն նախահայր Արամը «Մեղու-Հայաստանի» լրագրի էջերի վրա ի սիրուս հայ աշխարհի արձագանք էր այն ձայնը. «Մատթէոս և Գէորգ կաթողիկոսները որքան էլ ունեցան բարձր դպրամունք, յիշատակ թողնելու բարի ցանկութիւն, բայց և այնպէս ժողովուրդը նրանց օրով անտարբերութեան մէջ ընկաւ դէպքի եկեղեցին, կաթողիկոսների օրով ժամանակաւոր իշխանութիւնը ձեռք բերելուն:

Այդ բաւական չէ. այդ համեստ, բարի, շիտակ, ճիշդ, խղճմտաւոր, անխախտ անձը՝ մի ուրիշ պակասութիւն էլ ունի: Նա թէ Գէորգ և թէ Մակար կաթողիկոսի ժամանակ միշտ տարբերակ սովորութիւն ունէր հովանաւորել վանքում այնպիսի անձանց, բարեկամներն այնպիսի անձանց հետ, որոնք եթէ չստեղծ հաւածված էին կաթողիկոսից, գոնէ նրա աչքից ընկած էին:

—Այդ ինչ սովորութիւն ունես, Նրեմիա եպիսկոպոս, ասում էր շատ անգամ կաթողիկոսը, դիմելով Գալատեանին, —միշտ այն արեղանների հետ ես սերտ բարեկամանում, նրանց խոցն այցելում, որոնց ես չեմ սիրում, որոնց ես հաւածում եմ... —Ահախառն տէր, պատասխանում էր Նրեմիան, դուք գիտէք թէ որքան անկեղծ կերպով նուիրված եմ ես ձեր անձնաւորութեանը, իմ անձն ձեզ է պատկանում, սակայն խիղճս ինձ է պատկանում: Ես իմ քրիստոնէական պարտաւորութիւնն եմ համարում՝ ձեր հնորայից, ձեր հովանաւորութիւնից, ձեր սիրուց զրկվածներին՝ միմիկարել իմ ներկայութեամբ, իմ բարեկամութեամբ... —

Վախճանվում է Մակար կաթողիկոսը: Աւարտաւոր Նրեմիան, եպիսկոպոսական աւագութեան կարգով՝ դառնում է կաթողիկոսական տեղակալ:

«Արդեօք այդ համեստ, ազնիւ, բայց չափից դուրս բարի, չափից դուրս ներողալիտ մարդը կը

որ վերաբերում ենք ոչ թէ հանգուցեալ հայրապետների անհոգութեան, այլ նրանց անձնաւորութիւններին այն ժողովրդեան և եկեղեցականութեան վիճակին և պիտոյից, որոնց հոգաւոր կոչված էին ի պաշտօնէ: Մենք չենք կարող երեսկայել Կ. Պոլսի պատերազմը մի ուսաստանցի կամ պարսկաստանցի եպիսկոպոսի, որ իւր բոլոր ժամանակն անցուցել է այդ երկրներից մէկում, այնպէս կը թվիլու ռ. դաստիարակվել է, այդ երկրների օրինաց հոգով:»

Իսկ այսօր նրա դաշնակից ժառանգները և հին ու նոր բարեկամները ասում են. «Նրա տաճկահայ իրենց բազմութիւն և նշանաւորագոյն եկեղեցականների դասից մէկին արժանաւոր են գտել բազմեցնելու Լուսաւորչի Աթոռի վրա, մինչ չենք վառարանել նրանց հակառակ ընթանալու և ընդունել ենք աղբի 2/3-ի ընտրածը:

«Պատմութիւնը վկայ է, որ մինչ երբեք չենք զղջացել այդ ընթացքի համար:

«Ժողովուրդս էր Մատթէոս կաթողիկոսը և աղբի շաներին անձնանուէր Գէորգ կաթողիկոսն այժմ մեր օրինակելի Հայրապետաց չաբըմն են դասուած, նրանց հայնոյններն իսկ չեն յանդուրձում առանց դուռտուր խօսել նրանց մասին» *):

Համեմատեցէք պահպանողականների, աւանդապահների այն օրվայ և այսօրվայ քարոզածները: Կամ այն է, որ նրանք առաջինը իրանք ամենին չեն հաւատում իրանց ասածին. կամ էլ այն է, որ նրանք յիշողութիւն ասված բանը չունեն: Իսկ պահպանողական և աւանդապահ լինել առանց յիշողութեան՝ այդ միայն կարելի է, երեւի, մեր պահպանողականներին, որոնք ամենին ոչինչ էլ չունեն պահպանելու, քանի որ երեկվայ ասածին իրանք իսկ չեն հաւատում այսօր, քանի որ երեկվայ ուրախացած այսօր դաւանում են, և այսօրվայ դաւանածը այսօր անգամ ուրանում են: Ուրեմն նրանք պահելու բան էլ չունեն:

1885 թվին նրանք, Սուրբիսա եպիսկոպոսի առաջնորդութեամբ, մաղ էր միացել որ բոլորովին ջնջէին ընտրելիների շարքից «տաճկահայ նշանաւորագոյն եկեղեցականների» անունները, որ աղբի 2/3 մասը առաջարկել էր, և Մակար արքեպիսկոպոսի անունը այդ շարքի մէջ մտցնելու պայմա-

*) «Արձագանք» 1892, № 16, փետր. 7.

կարողանայ կառավարել գործերը, այնքան ընաւորութեան գործութիւն կունենայ, որ կարողանայ զինադրել հակառակորդներին:»

Անա այդ հարցն էին իրար առաջարկում շատերը, որոնք մօտ ծանօթութիւն ունէին Գալատեան եպիսկոպոսի հետ:

Թեւահաւանները սխալվեցան սակայն: Նրեմիան ցոյց տուց կամքի գործութիւն, սովորելի մարդութիւն լարվող ինտրիգաներին: Համեստութեան և բարութեան հետ՝ նա ցոյց տուց վերին աստիճանի համբերութիւն և վերին աստիճանի սառնասրտութիւն...:

Ինչի մէջն է այդ, ըստ երևոյթին, յանկարծակի կերպարանափոխութեան գաղտնիքը...:

Ամենին չը կար ոչինչ կերպարանափոխութիւն, Նրեմիան միայն նոյնն էր, ինչ որ էր կաթողիկոսի կենդանութեան ժամանակ. ազնիւ, բարի, ներող դէպքի ամենքը և սառնասրտութիւն դէպքի յարձակողները:

«Ինչ ես պատէ պատ ընկնում, սրբաղան», ասում էր նա սինոդում գոռում-գոչում բարձրացնող Սուրբաթին: «Զգո՛ւ իղիւր, հայր-սուրբ», ասում էր նա կատաղաբար իր վրա յարձակող Բարդուղիմէոս վարդապետին:

Կամայականութեանը, ապօրինի վարմունքին՝ դիմադրել խիստ օրինական (լեզալ) ճանապարհով, —անա Նրեմիա եպիսկոպոսի ընթացքը: Սրա մէջն է իր ոյժի գաղտնիքը:

Սակայն և մի ուրիշ գաղտնիք կայ թէ ինչ է պատճառը, որ իր միամտայ տեղակալութեան մի-

նով միայն՝ հազիւ հազ նրանք մնացին ընտրելիների ցուցակում: Իսկ այսօր մի և նոյն պահպանողականները միմիայն սրանց արեւով են երդվում:

Սրանց արեւով են երդվում նրանք և ձեր դաւաւան են ողջունում, Թիւրքահայ եղբայրներ: Բայց դուք իմաստութեամբ վարված կը լինիք, եթէ ամուր փակէք ձեր սրտի դռները թողնելու իր կարկառած ձեռքերի դիմաց, եթէ որ այդ դռների ետեւ գողացվելու բաներ կան պահած: Որովհետեւ մի անգամ որ դուք ձեր դռները կոտորվել տուիք պրծաք, այնուհետեւ անպետք էք և քամահելի:

Ընտրողը դուք էք, ասում են նրանք, և ձեր ընտրածը ընդունելի է: Ընդունելի կը լինի կամայականաց, անշուշտ, քանի որ օրէնքով ձայների բազմութիւնն է խնդիրն որոշողը և դուք թուով ճիշդ այնքան էք եկել, որ կարող էք խղճել ձեր ուսանայ և պարսկահայկահայ եղբայրների ձայնը, եթէ նրանց դէմ հակառակ բանակ կազմելու դիտարկվի: Բայց եթէ դուք անէք մեր պահպանողականներին անհաճոյ մի ընտրութիւն, այն ժամանակ կը տեսնէք, կը լսէք, որ դուք իւրաւունք իսկ չունէիք ձեր թւի տակ ուսանայ եղբայրների էական շահերը ճշշելու և ճակելու:

Այդ ունեցէք ի մօի և բարով էք եկել և Աստուած ձեզ բարի ճանապարհ տայ դէպի ս. Էջմիածին:

Ա. Մ. Եղեկեան

ՂՐԻՄԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ԵՒ ԽՈՐԴԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՏԵՓԱՆԷ

Մի երկու ամիս առաջ լուր էր տարածվել, որ Տ. Խորէն Ստեփանէն սինոդի կարգադրութեամբ Ղրիմից կոկկաս է կանչված քարոզչի պաշտօնով: Այդ լուրը շատերին մեծ ուրախութիւն պատճառեց: Տ. Ստեփանէն ճշմարիտ որ իր ձիւղբերով և բարձր կրթութեամբ կանչված է մարդկային սրբտերի վրա իշխել. զգացված սրտի խորքերից բըղխած կենդանի խօսքը մի գործը դնէր է, որ տուած է սակաւթիւ ընտրեալներին. այդ դէպքը մեծ դեր է կատարել ամեն ժամանակ և ամեն աղբերի պատմութեան մէջ. Տ. Խորէնը ունի ընտրեալներ

Չոցում Նրեմիան կարողացաւ այդքան աջող կերպով վարել իր պաշտօնը, կառավարել հայոց եկեղեցական վարչական գործերը, կառավարել վանքը:

Գաղտնիքը սա է. ճշմարիտ հանճարեղ պետական մարդիկ, որոնք դիտեն, ճանաչում են իրանց հանճարի ոյժը՝ շատ անգամ լինում են չափից դուրս անձնաւորաւոր: Այդպիսիները շատ անգամ գործում են, հաւատարմով միմիայն իրանց անձնական ոյժերին, յանկարծ միմիայն իրանց ինքնուրոյնութեան, իրանց անհատական նախաձեռնութեան վրա...:

Իսկ Նրեմիա եպիսկոպոսը, որպէս վարչական մարդ, չափից դուրս համեստ է՝ այդքան անձնավատար լինելու համար: Նրա ոյժը դրա մէջն է, որ նա լսում է ուրիշների խորհուրդները, դիմէ չըճապատել իրան խորհրդատուներով: Բաւական չէ, որ նա անձնավատար չէ, բայց նա անխախտ էլ է:

Ինչքան էլ գործիչները սով լինէր մեր արդեան հողերականութեան մէջ, տեղակալը այնքան հոտառութիւն ունի որ գիտէ, որքան նաւր կայ, ընտրել մարդիկ այդ հողերականութեան միջոց... Եւ դա, արդէն մեծ արժանաւորութիւն է: Վերջին գիծ. Գալատեան վերին աստիճանի աշխիւ մարդ լինելով՝ լաւ տնտեսագետ է, աշխատատէր և խղճմտաւոր մարդ լինելով՝ օրինակելի վանահայր է:

Գ. Ա.

Յայտնի ճշմարտություն է, որ զարգացող մարդկային շատագուցակները խառնարկապատկերներ են մղած կուռ մեջ եղել են անխնայ և խստապիտո, որի փոխարեն հալածանքը եղել է նրանց միակ վարձատրությունը:

Բայց մենք չենք դրսևարարվում, չենք հալածվում ինքնահալած, անապարծ հայրենակիցներից, եթե իր հնաշխարհիկ քնարով անխնայ չը մտրակել նրանց թերությունները. Հենց հազիւ պրծնելով իր հակառակորդների ձեռքից՝ չէր գնաց Պարսիկ, չէր բնակվել այնտեղ, եթե իր երգիծական համոծակ թուճաւոր սլաւաբանները չը խալթէր Գարմանիայի 30-կան թափաքանների թիւով ազդասէրների կեղծաւորութիւնը և տխմարութիւնը:

Մի քանի մէջ կարելի է հ. Խորէնին մեղադրել, որ նա բազմական տպաւորութեան տակ երբեմն խոշոր սխալանքների մէջ է ընկնում, որից առաջ են գալիս անխուսափելի հակասութիւններ, անհին դատաւարութիւններ: Անխուսափելի էր դեմ մարտունակ, ճշմարտութեան շահերին պաշտպան լինել, ձգտել բարին յաղթող հանդիսացնել, ամեն վեհանքն և բարեհաճ մարդու կենսքի ծրարելը պէտք է լինի, բայց գործելով կենսքի և մարդկանց մէջ, չը պէտք է մտազղկն կենսքի բազմաթիւ պայմանները և մարդկանց անթիւ թուլութիւնները, որոնց ուսումնասիրութիւնը յաղթութեան ճշմարիտ գրաւակն է...

Վերջացնում եմ իմ խօսքը ցանկանալով ի բոլոր սրտէ հ. Խորէնի վրա դրած բռնութեան կապանքները շուտով փշլւած տեսնել. թող Մայր Աթոռի ընտրվելի գահակալը աւելի շրջապահաց լինի ազգի չարն ու բարին ճանաչելու մէջ, թող չը կրկնվեն անցեալի սխալները, որոնցից տարապտու է ազգը, թող չը հալածվեն ազգի ճշմարիտ բարեկամները, թող Խորէնի պէս մարդիկ առիթ չունենան առել «այս ահաւան առանձնութիւնն աւելի դառն չէր լինի քան համար, եթե սոյն միջոցին մեր սիրելի հեռաքնակ հայ եղբայրների թշուառ վիճակը չը մնայր միջ, եթե հեռաքնակ հայերը, երթարկելով օտարազաւան քարոզիչներին փորձութիւններին, առաքելական-աղագային քառողի չը հայցէին բարձր աղաղակներով, որոնք ուրիշներից յետոյ հասնում են ինձ ևս, և ես ստիպված եմ մնալ հեռու անտառների և անբերի մէջ միայնակ...:

Եւ այսօր կաթողիկոսական ընտրութեան նախաձեռնութիւնը ազգի pia desideria-ն թող լսելի լինի ում անկ է. անցեալ սխալների կրկնութիւնը այս անգամ օրհասական են լինելու ազգի կեցութեան շահերին:

Յով. Սպենդիարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

Թիֆլիս, 24 ապրիլի
Հարկաւոր եմ համարում յայտնել, որ իմ խմբի արտասահման գնացը վերջնականապէս աջողութեմ է, և խումբը ճանապարհ կընկնի յուրիս վերջերին:

Այդ միջոցին Թիֆլիս գտնվելով և ուղենալով որ բոլոր տեղերից ցանկացողները մասնակցեն խմբին, հրապարակով դիմում եմ այն օրիորդներին և պարոններին, որոնք կը կամենան իբրեւ երգիչ մասնակցել իմ խմբի մէջ և խմբի հետ միասին արտասահման գնալ, բարեհաճեն դիմել ինձ, իրանց ձայնը փորձելու և համաձայնութիւն յայտնելու համար:

Ցանկացողները թող բարեհաճեն դիմել Сверхные номера № 63, շաբաթ օր, ապրիլի 25-ին, երեկոյան 5—7 ժամ:

Կարա-Մուրզա

ՆԵՐՒՈՆ ԼՈՒՈՐ

Մինչև այժմ կուլիս եկած թիւքահայ պատգամաւորների թիւը մօտ 25 է: Որքան տեղեկացանք, բոլոր եկողների թիւը գուցէ քառասունին հասնի. ուրեմն թիւքահայոց բոլոր պատգամաւորների միջին հազիւ կէսը կը մասնակցի ընտրութեան: Այդ քանակ գլխաւոր յանգաւորը կ. Պօլսի պատրիարքը և պատրիարքաւորն են, որ վարդապետ իմաց չը տուին Հայաստանի ներքին գաւառներին, որպէս զի վարդապետ ընտրութիւն լինի և իր ժամանակ դան չըմկան հասնին: Այդ անհոգութիւնը, ինչպէս շատ անգամ ասել ենք, միանգամայն անմեղելի է: Մեզ մնում է միայն ողջունելով այն պատգամաւորներին, որոնք եկել են և

գալու են, ցանկանալ, որ նրանք աշխատեն անխաղախ կերպով արտայայտել թիւքահայ մեր եղբայրների ցանկութիւնը, և աշխատեն կաթողիկոսական դարձ բարձրացնել այն անձնաւորութիւնը, որի անունով ողբերկը է մեզ հետ միասին ամբողջ թիւքահայ Հայաստանը:

Թիւքահայոց պատգամաւորներն այս օրերս Թիֆլիսում այցելել են մի քանի դպրոցներ և քաղաքիս հետաքրքրական տեղերը:

Այսօր, ապրիլի 25-ից, Կառավարչապետի պատի դահլիճներում բացվելու է Թիֆլիսի ռուսաց Բարեգործական ընկերութեան դպրոցների աշակերտահիւնների ձեռնադրծների ցուցահանդէսը, որը կը տևի մինչև ապրիլի 28-ը:

Էջմիածնից մեզ տեղեկացնում են, որ այնտեղ արդէն պատրաստել են սենեակներ՝ հիւրերին ընդունելու համար: Մի քանի հոգեւորական պատգամաւորներ արդէն հասել են Էջմիածին:

Վաղը, կիրակի օր, ապրիլի 26-ին, Միջաշէկան փողոցում, նախկին «Եւրօպա» պոլիտեմ արվելու է պատգամաւորական ճաշիկը:

Մօսկվայի համալսարանի պրոֆէսոր Ն. Ներսէսեան նշանակված է օրդինար պրոֆէսոր:

Լուսմ ենք, որ այս օրերս Կարսի վրայով գնալու են Էջմիածին մի քանի պատգամաւորներ՝ արեւելեան Հայաստանի գաւառները:

Բաթումից մեզ հաղորդում են, որ այնտեղի երկրաւարութիւնը ճաշկերպի հրաւիրեց ապրիլի 22-ին Բաթում հասած թիւքահայոց պատգամաւորներին:

Երէկ Թիֆլիս հասան թիւքահայոց 14 պատգամաւորներ: Նրանք հասել են Բաթում ապրիլի 22-ի առաւօտեան, աւստրիական Վիեննայ շոգենաւով: 14 պատգամաւորներից 8 եկեղեցական և 6 աշխարհական են: Ահա նրանց անունացուցակը. 1) Սահակ Եպիսկոպոս Խապայեան—Երուսաղէմի միաբնութեան կողմից. 2) Ստեփան Եպիսկոպոս Յովակիմեան—Նիկիտիկայի առաջնորդ (իպիմ). 3) Եղիշէ Ժ. Վ. Ալվաղեան—առաջնորդ Ամասիայի և Եւզոկիայի. 4) Գեորգ Ժ. Վ. Իւթիւճեան—առաջնորդ Երզրայոսի. 5) Գեորգ Ժ. Վ. Երէցեան—այցելու հովիւ Բոմինիայի և Բօլզարիայի. 6) Տէր-Դատ Վ. Պալեան—առաջնորդ Կիսարիայի. 7) Տէր Բարթոլոմէոս քահանայ Սարաճեան—Չարչապետի առաջնորդի տեղ. 8) Տէր Յարութիւն քահանայ Յակոբեան—Ալեքսանդրոպոլի տեղ. 9) Տէր Յարութիւն Թորոսեան—Երուսաղէմի պատգամաւոր. 10) Համբարձում Մօստիճեան—Կեսարիայի. 11) Գաապար Տ. Թ. Գաապարեան—Նիկիտիկայի (իպիմ), 12) Սալաւոր Արսլանեան—Չարչապետի. 13) Յովսէփ Ճանիկեան—Ալեքս. 14) Մանտեփ Կարապետ Մարգարեան—Բաբելոնի պատգամաւոր:

Մենք լուսմ ենք որ վանից ընտրվել են պատգամաւորներ Յովսէփ Ժ. Վ. Ալվաղեան և պ. Մանուէլ Անանեան: Իսկ Լիւ և Կոտոց անապատից Բարդուղիմէոս Վ. Գիւրջեան և պ. Մարկոս Նաթանեան:

Լուսմ ենք որ մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնէ տէր-Յովսէփ քահանայ Երզնիկեանցի «Մանկական ձայնազրեւել երգարանը» երկրորդ բարեկրկնված տպագրութեամբ:

Յօգուտ Բաթայի Պատկանեանի ստացանք թիֆլիսաբնակ տիկին Նուշէ Իգիթիանեանից 3 բուրլի: Նախկին 337 բ. 80 կ. դոււարի հետ ունենք այժմ 340 բուրլի 80 կուպէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՌԻՍՅՈՒՑ

Կերասոն, 16 ապրիլի

Կ. Պօլսի հայ թերթերն նա մանաւանդ «Արեւիկե» բարձր տակ կը պահեն գաւառային լուրը թղթակցութիւններ, որք եղած են քննադատել այս կամ այն ծանօթի հայ աղան, ցոյց տալով այն

նիւթական ու բարոյական կորուստներն՝ զորս նա պատճառած է ազգին՝ կամ անձամբ գողանալով և կամ իր զանազան գաղտնի և յայտնի շահերը պաշտպանելու համար, այլոց գողացնել տալով: Այսպէս կարծես միշտ պատուար մը կանդնեցած են Կ. Պօլսի լրագիրք գաւառներէ գաւած ճշմարտութեանց դէմ. բայց ասով միայն չը վերջանար անոնց անարդարութիւնը. անոնք այդ կարգի ճշմարիտ գրութիւնները չը հրատարակելէ զինի, յաճախ կը հաճին հրատարակել անոր հակառակ սուտ գովասանքի աջակցի գրութիւններ, որք ծանօթ հաճի աղաքի կամ էֆէնտիի մը չունեցած բարեմասնութեանց վրա կը խօսին, որուն սուտ ըլլալուն քաջ իրաւել են. և այս ամեն ցածութիւններ միայն այն նկատուում, որ բաժանորդ չը պակսի: Բայց մեզ Կ. Պօլսի խմբագիրք իրենց այս ընթացքով չէ թէ միայն ոչինչ կը չափն, այլ և կը կորսնցնեն երկու կերպով՝ ալ՝ նիւթական ու բարոյապէս. զի հիմակ անցած են այն զարմանալի ժամանակներ, ուր զարդեք և խմբագիրք իրենց շոյաւնեցու հարձիւ կապրէին: Այդի ժամանակիս մէջ ընթերցողն ալ հասարակ ժողովուրդն է, վճարողն ալ. «Արեւիկե» պէտք էր հասկնար այս նշանաւոր յեղաշրջում. զի երբ «Հայրենիք» մի քիչ ազատ և անկեղծ գրել սկսեց, տեսնուեցաւ անմիջապէս, որ քան զինք շատ աւելի բաժանորդ ունեցաւ սուղ ժամանակի մէջ, մինչ զի ինք հետզհետէ կը կորսնցնէր. ըսել է որ ժողովուրդը սկսած է ճանաչալ ինքզինք, և իր ճշմարիտ պաշտպանները: Կը փախաւքի որ Կ. Պօլսի հայ թերթեր, ընդ որ և «Հայրենիք», զի նա ևս չէ ունեցած տակալին կանոնաւոր ուղղութիւն և կատարեալ անկողնակալութիւն, և զի դեռ ևս աւելի կարեւորութիւն կուտայ Պօլսական թերթաւորութիւնը ու թուաւոր գրութեանց, քան գաւառային թղթակցութեանց, հաճէին պատուաւանել ինձ, թէ իրենք ինչ կ'իմանան անձնական ըսելով, երբ չան անգամ այդ պատճառը տալով ետ կը թողնուն հրատարակութեան արժանի նամակներ. միթէ անձնական աւելութեան պէտք է վերադրել, երբ մի գրող, որու ստորագրութիւնը իրենց արի մէջ է, և որ անշուշտ պատրաստ է իրապէս ապացուցանելու իր գրած ամբաստանութիւններն, կը ցուցնէ մեծամեծ նիւթական ու բարոյական գողութիւններ, զոր ըրած է այս կամ այն էֆէնտի: Եւ դարձեալ միթէ անձնականի հարկ է վերադրել, երբ մի գրող կըսէ թէ գաւառին օգտակար դատաւորն այս ինչ հաճի աղաքի քանահոգիքն չը ծառայելուն պատճառաւ վրէժնուած է, և թէ աղան դրած է անոր տեղ մի ուրիշը, որ անչինի հողաթափները վերցնելու արժանի չէ, և այլն. և կամ այս ինչ թաղային ժողովի ընտրութեան ժամանակ այս ինչ հակադրային ընթացքը բռնեցին, և թէ անկուր բռնութիւն քանեցուցին Ալեքսանով Կ. Պօլսի թերթեան դէմ մեր կարծիքը պարզելէ ապա, տէր խմբագիր, կը փութամ քանի մը կարեւոր հարցումներով տեղւոյս հատարակութիւնը լուսաւորել մութի մէջ մնացած քանի մը խնդրոց մասին: Այդ կը խնդրեմ, որ հաճի պատասխանել մեզ հետաքրքիր հարցմանց նա, որ 30 տարի դրեթէ շարունակ աղքատեան եղած է, և որ միապետաւոր գործած է:

1) Ասկէ իբր 20 տարի առաջ մի աղայի մօտ առ ազգն ունեցած 100 ոսկի մուրհակաւ պարտքը ինչպէս կըլլայ, որ վճարուած պահուն 50 ոսկով կը գոցուի, առանց ժողովի և ժողովրդի գիտութեան, քանի որ պարտաւորը 4—5000 ոսկու կարողութեան տէր հարուստ մ'էր, և է:

2) Մի ուրիշի վրա ազգին մուրհակաւ ունեցած 30 ոսկի պահանջը ինչու համար չէ զանձուած այն ատեններն, ուր նոքա կարող վիճակի մէջ կը գտնուէին, և եթէ չէ զանձուած դէժ ինչ պատճառաւ մուրհակ չէ փոխուած, որով այսօր միւրուրդ դէմա ալ եղած է:

3) Մի բոլորովին անկարող ու աղքատ գիւղացւոյն վրա ազգին ունեցած 1200 դահեկանի պահանջը ուրիշ առաջ եկած է:

4) Հանգուցեալ մի ալ աղայի վրա ազգին ունեցած 30 ոսկի պահանջը 12 տարեկ ի վեր ինչու չէ զանձուած, և ինչու այս ատեններն ու մուրհակները և հաշիւը չէ յանձնուած ասկէ 4 տարի առաջ իրեն յաջորդող խորհրդոյ պետին և կամ նոյն իսկ ժողովին:

Կրնայի այս հարցմանց կցել դեռ ևս շատ ուրիշ հարցումներ ալ, բայց նկատելով որ ասոնց պատասխաններն ալ բաւական պիտի ըլլան լուսաւորելու զկերասոնցիս, որք թող չը ցուին եթէ

ըսեմ թէ ցարդ կուրութեամբ կապրին, ուստի առ այժմ բաւական կը համարեմ այս չափով: ***

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԳ, 22 ապրիլի: Արտաքին գործերի մինիստրը անվտանգ դրութեան մէջ է. բիւլետենի տպագրութիւնը ընդհատուած է: Լրագիրները հաղորդում են, որ Բուխարայի էմիրը գալու է Պետերբուրգ յունիսի 1-ին և վերադարձին կայցելի Մօսկվա, Վարչալա, Կիեւ, Օդեսա:

ՊԱՐԻՋ, 22 ապրիլի: Անարխիստներն զիմադրելու միջոցները շարունակում են. այսօր էլ խաղաղութիւններ եղան. գաղտնի ուսուցանութեան անդամներ թիւք աւելացրին. արդարաւորութեան մինիստրը ուղարկեց զխաւոր պրօկուրօրներին չըբարեկաման, որով հրաւիրում է ճշդութեամբ կատարել այն կանոնները, որոնք վերաբերում են պալլեցնող նիւթերի, մանաւանդ զինամիտի պատրաստելուն, վաճառելուն և պահելուն:

ԲՐԻՒՍԵԼ, 22 ապրիլի: Արդարադատութեան մինիստրը ներկայումս մի նախագիծ է մշակում՝ անարխիստների դէմ շատ խիստ միջոցներ գործադրելու համար:

ՆԻՒԵՐՈՎ, 22 ապրիլի: Երէկ այստեղից Ռիգա ուղևորվեց «Tinahad» նաւը ուսուստի պաշարով, որ նուրիշ են Եօկայի բնակիչները յօգուտ ուսուստիներին:

ՊԵՏԵՐՈՒԳ, 23 ապրիլի: 18—21 ապրիլի առաւմէն մանափողով ստացել է 4433 բուրլի: Ջինսաւորական ֆինանսների և ներքին գործերի մինիստրների ներկայացուցիչներից կազմած յանձնաժողովը հարկաւոր համարեց լրացնել այն միջոցները, որոնք հարկաւոր են պաշտպանելու գլխաւորապէս Արդիւստեան երկրորդ և առհասարակ պետութիւնը խօշորայից, որը երեսացել է Ազգահիտանում: Պետերբուրգի դուսման 107 ձայների առաւելութեամբ ընդգէմ 64-ի ձայնաւորի պաշտօնից զրկեց պ.պ. Դաւանանին և Կեղընին, այն պատճառով որ նրանք հայց էին յարուցել փոխելու ամբողջ ուղարակւն՝ վատ ալիւր գնելու հարցի համար:

ԿԱԶԱՆ, 23 ապրիլի: Այսօր վախճանից թղթերի բորբոքումից Կազանի արքեպիսկոպոս Պաւէլ:

ՄՕՍԿՎԱ, 23 ապրիլի: «УТРОМ МОЯ ПЕЧАЛИ» համայնքի տասն ողորմած քոյրեր ճանապարհ ընկան Եակուտսկի չըջանը՝ հիւանդներին օգնութիւն ցոյց տալու համար:

ՏԵՂԵԿԱՑՈՑՑ

ԱՆԴԻԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԱԹՈՒՂԻ

Ճանապարհորդական գնացքներ Թիֆլիսի և Բաթումի մէջ.

№ 1
ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 9 Ժ. 45 բ. առաւ. ԹԻՖԼԻՍ հասնում է 9 > 52 > երեկ.

№ 2
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 9 Ժ. 30 բ. առաւ. ԲԱԹՈՒՄ հասնում է 9 > 45 > երեկ. Պօստային գնացքներ Բաթումի և Բազուլի մէջ.

№ 3
ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 11 Ժ. 25 բ. երեկ. ԹԻՖԼԻՍ հասնում է 12 > 25 > ցերեկ. ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 1 > 20 > ցերեկ. ԲԱԹՈՒՄ հասնում է 7 > 30 > առաւ.

№ 4
ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 11 Ժ. 10 բ. գիշեր. ԹԻՖԼԻՍ հասնում է 5 > 50 > երեկ. ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 6 > 50 > երեկ. ԲԱԹՈՒՄ հասնում է 8 > 15 > առաւ.

Խառն գնացքներ Թիֆլիսի և Գանձակի մէջ
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 9 Ժ. 20 բ. երեկ. ԳԱՆԶԱԿ հասնում է 10 > 10 > առաւ. ԳԱՆԶԱԿԻՑ մեկնում է 7 > 35 > երեկ. ԹԻՖԼԻՍ հասնում է 7 > 30 > առաւ.

—

ՌՈՒՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈԳՆԱԿՆԵՐ

ՀԻՆԳԵԱԲՈՒՑ, 4 ժամին երեկոյան, չըջական բէյտով Բաթումից դէպի Օդեսա:

ՇԱՐԱԹ, 8 ժամին երեկոյան նմանապէս:

ԵՐԱԹՈՒՂԻ, 7 ժամին երեկոյան, Բաթումից դէպի Կ. Պօլսա:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՊՐԻԼԻ 26-ԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Լ Թ Ի Ը Ն

Խ. ՄԱՆՈՒՄԵԱՆԻ

Գնել կարելի է գրավաճառանոցներում: Օտար քաղաքներից զինել՝ հեղինակին, «Մշակի» խմբագրատուն:

(№ 45) 1—2

ՄԻ ՕՐԻՈՐԻ, որ մի քանի տարի վարժուհու պաշտոն է վարել հայոց դպրոցներում, ցանկանում է հայոց ընտանիքում ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀՈՒ պաշտոն ունենալ: Կարող է պարապել երեխաների հետ հայոց լեզուից և զանազան առարկաներից՝ հայերեն լեզուով: Պայմանների մասին կարելի է հարցնել «Մշակի» խմբագրատուն:

(№ 45)

1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Երանում է ի զիտություն, որ ապրիլի 28-ին, երեքշաբթի օր, կեսօրվայ 12 ժամին, վարչության բնակարանում, կը լինի աճուրդ՝ աճուրդով տալու քաղաքային հետևալ հողերը. առաջինը՝ «Նախկին» կիսակայարանի մոտ, 100 քառ. սաժէն, երկրորդը՝ Հալաբարի ետևը, դաջ ձեռք բերելու համար, հետևալ սահմաններով. հիստիս-արևմտադրեց իշխան Ամատունու և իշխան Բեհբուջանյանների հողը մինչև Մախաթի սարը, արևմտադրեց՝ Մախաթի սարից մինչև Կախեթեան շոսէն, հարավից՝ Կախեթեան շոսէն, արևելքից և հիստիս-արևելեան կողմից՝ Չերկոսեթի մինչև աղբիւրը, որը սահմանակից է Ամատունու կարուածքին, տարածությունը 475 դեկատին, 2340 քառ. սաժէն և երրորդը՝ Նախկին քաղաքային սպանդանոցի յետևը, վարտպատրիկովի զործարանից ներքև, տարածությունը 100 քառ. սաժէն:

Պայմանագրերը կարելի է տեսնել վարչության գրասենյակում, 10—2 ժամը:

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շոգենավների կանոնադր և ուղղակի երթևեկություն ՄԱՐՍԵԼԻՑ ԴԵՎԻ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 25 դեկտեմբերից (6 յունվարից) սկսած և փոխադարձ:

Բաթունից Մարսել, մանկավ՝ Տրապիզոն, Սամոս, և Կ. Պոլիս:

ԲԱՌՈՒՄԻՑ ՇՈԳԵՆԱՎԵՐ ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 15/27 ապրիլի	չորեքշաբթի ՄԻՆԳՐԵԼԻԱ ՆԱԼԱԿԱՆ ԲՈՇԷԼ
— 29 ապրիլի (11 մայիսի)	— ԱՆԱՏՈԼԻԱ — ԳԱՐԻԲ
— 13/25 մայիսի	— ԱՐՄԵՆԻԱ — ՏԻՐԱՆ
— 27 մայիսի (8 յունիսի)	— ՄԻՆԳՐԵԼԻԱ — ԲՈՇԷԼ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԻ օրերը, 4 ժամին կեսօրից յետոյ: Տոմարների գները ուղղակի երթևեկության բաթունից դեպի Պարիզ իսկական գները պակասեցրած են:

Տեղեկությունների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճին զինել ընկերության ագենտներին. ԲԱՌՈՒՄԻՍ Կ. Գարանիսին, Նաբերեժնայա, ԹԻՖԼԻՍԻՍ Կ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին զենեղալ ՏԵՐ-ԱՍԱՏՈՐՈՎԻ տանը, ԲԱԳԻՈՒՄ, Սամուել Գիլգարովին, Կոլեբիակիսկայա հրապարակ, և ՆՕՎՕՐՈՍԻՑ-ՍԿՈՒՄ Կ. Լուի Բլանշին:

(№ 124) 6—10 (Ե. չ.)

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սոջախկայա փողոց, սեփական տանը № 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյան 4 ժամից մինչև 6 ժ. Կիրակի և առ օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:

(№ 145)

40—150

НЪМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահավորված նոսրերներ. որոնց սարք ու կարգը ամենայաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նոսրերների գները 50 կոպեկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերեն «Մշակ» և «Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ ըհատարան, տեղեֆոն, քաղցրեղենների խանութ, բաղնիքներ:

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:

(№ 21)

13—130 (2.)

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Ոչի հասցենը տարածության վրա.

ԷԼԵԿՏՐՈՆ

ԳԱՋԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Օտոմո սխեսմայի, որոնք իրանք իրանք են ուղղում ու օժուկ:

ՏԵԼԵՖՈՆՆԵՐԻ ՍԱՐԲԵԼ.

ԳԼԵԲՈՎ Եղբայրներ

Գաղի համար — ածուխից,

Էլեկտրական նշաններ.

ՐՕՍՏՈՎ (Գոնի վրա)

— — — նաւթից,

ՋԱՆԳԱԿՆԵՐ

ՄԵՏ Սարգսյան փողոց,

— — — անտրացիտից,

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

24

— — — կերամիկից

Էլեկտրոլիզ.

Ափսոսաբանություն, էլեմենտներ,

ՐՕՏՈՎԻ (на Дону)

1/2-ից մինչև 120 ձիու ոյժի:

ՇԱՆՔԱՐԵԼԻՆԵՐ.

ՅՐ. ԳԼԵԲՈՎԻ

Շոգենավների մեծ արաղու-թեան.

Նախահալիներ և ծրագիրներ ձրի-արար.

Большая Садовая, 24.

60—100 (Ե. չ.)

(91—№ 5)

Молодая особа желаетъ получить мѣсто конторщицы или въ книжномъ магазинѣ, или въ библиотекѣ, или-же въ какой либо конторѣ. Адресъ оста- вить въ редакціи арм. газеты „Мшакъ“.

ՄԻ ՕՐԻՈՐԻ ցանկանում է պաշտոն ստանալ մի գրասենեակում, կամ գրադարանում, կամ վերջապես մի գրավաճառանոցում: Հասցեն թողնել «Մշակի» խմբագրատունը:

(№ 44.)

3—3

Մեծ չերամպական հաստատություններ ՄՕԼՏԻՖԱՕ ասված տեղում, ԿՕՐՍԻԿԱ կղզում Ֆրանսիայում:

ԱԼՕԻԶԻ ԵՒ ԸՆԿ.

Խոնարհաբար խնդրում է չերամպ սերմի յարգելի առնողներին զինել ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԻՎԱՏՆՏԵ-ՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆԸ, կամ Թիֆլիսի չերամպական կայարանը:

Մեծ քանակությամբ առնողները թող բարեհաճեն զինել Կովկասեան Գիւղատնտեսական ըն- կերութեան անդամ պ. Վ. Ա. ՍՈՒԼԻՍԱՆՕՎԻՆ, Թիֆլիսում, Կուկիա, Նիկոլաեվսկայա փողոց, տուն № 39.

Պ. Ալօիզի սերմերը ծախվում են 1, 3, 5 և 10 զօլտնիկ կշռող արկղներում, հաշվով իւ- րաքանչիւր զօլտնիկը 60 կոպեկով: Սերմի լաւութեան երաշխաւորութիւն կարող է լինել այն, որ ինքն պ. Սլօիզի վարձատրված է պատուար զիւլումով և ցելիւէր սերմի պաշտօնական հայժայթող է Թուրքեստան երկրում:

17—17 (2.)

(№ 140) Ե. ԱԼՕԻԶԻ

ԲԺԻՇԿ Ա. Յ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ընդունում է ամեն օր առաւօտեան 10—12 ժամը, կէսօրից յետոյ 4—6 ժամը, աղքատներին ձրի. Ֆրէյլինկայա փողոց, տուն № 6.

(№ 39)

3—10

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ վաճառականական զասակարգին պատկանող իւրաքանչիւր անձի համարու ՄԱՏՁԵԼԻ ՁԵՆՆԱՐԿ առեւտրական հաշարարու- թիւներ առանց ուսուցչի օգնութեան ուսումնասիրելու համար:

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

ՁԵՆՆԱՐԿ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՀԱՇԻԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տօկոսների լիակատար աղեսակներով, 1-ից մինչև 10.000 ռուբ. համար. 10/0-ից մինչև 120/0 վաճառվում է եղբայր Ծովանովների բանկային գրասենեակում և հեղինակի մօտ. Тифлисе, Нагорная ул., № 9. Օտարաքաղաքացիք զինում են վերջին հասցեով՝ С. П. Ма- нуэльянцу.

Գին է 1 ռուբլի փօսի ծախս 21 կ. Գրավաճառներին զիջում կը լինի:

(91—№ 95)

88—150

Մ Ր Ց Ո Ղ

„ՎԻԷՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВЪНШЕІЙ МАГАЗИНЪ)

Գօլովինսկի պրոսպեկտ, առաջին գիմնազիայի հանդէպ, տուն Մզիվանի:

Ս տ ա ց Լ Ե Ն Ե Մ ԵՐ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՐ ԳԱՐԻՆԱՆԱՅԻՆ և ա մ ա ռ ն ա յ ի ն սեղծի համար ՏՂԱՄԱՐԴԱՆՑ և ԵՐԵՎԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍ ՀԱԳՈՒՍՆԵՐ ամե- նավերին ձեռի: Ապրանքների լաւութեան համար վաճառատունը լիովին ե- րաշխաւորում է:

ԳՆԵՐՆ ԷԺԱՆ ԵՒ ԱՄԵՆՔԻՆ ՄԱՏՁԵԼԻ ԵՆ:

Խուզավերքեան եղբայրներ

№ 28 4—5

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ո Ւ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՎՕԼԳԱՅԻ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

որը հիմնված է 1843 թվին, բայց արաւ գործակալութիւն, որն ընդունում է բեռներ վաճառել տեղափոխելու համար՝ դէպի Կասպեան բոլոր նաւահանգիստները, Մօսկվա, Պե- տերբուրգ, Վարշավա, Բիգա, Լօդք քաղաքները և Ռուսաստանի երկաթուղային բոլոր կայարանները:

Գործակալութեան գրասենեակը գտնվում է Թիֆլիսում Սիօնի փողոցի վրա, նախ- կին Արժրուհու քարվանսարա:

(№ 38)

Գործակալ՝ Թ. Շահինեան 4—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԵՍԻՈՆԱԼ ԱՐ- ՀԵՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդիմանների և սպիտակեղենի ձեռի դասեր Գլօղլինսկու մեթօդով և Շեդզերի Ֆրանսիական մեթօդով:

2) Կարի դասեր մօղային ժուրնալներով:

3) Հարթակարի և զանազան ձեւադործների դասեր:

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու հա- մար:

Վճարը ամսական 2 ռուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկո- յեան:

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի:

(№ 23) 18—40

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՅՈՑ ՍԻՆՕԴԻ ԱՏԵՆԻ ՄԷԶ

Նշանակված է ա- ճուրդ վարձով տալու համար ամենատեսակ արդիւնքը Ս. Էլմիաճի աթոռին պատկա- նեալ զինվորի, այն է՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 20 և 22 մայիսի տարւոյս. Օշականի և Մոդիւնոյ 26 և 29 նոյն ամսոյ. Եղուարդի և Մաստարու 3 և 5 յունիսի. և Բջնոյ 8 և 10 նոյն ամսոյ:

Անգամ կօնսիտորիայի Համազասպ վարդապետ

4—4 (5)